նից՝ Մարիամ. տեղի բնակութեան ընտրեաց նա զեկեղեցին Հայոց, ուր պաշտի պարտուպատշաճ յարգանաք ուստի սիրէ զմեծ զողորմութիւն »։

Դ. Երգ։ — « Մինչդեռ կամաք Որդւոյ Քո, վասն մեղաց մերոց, էանց Կամենից ընդ իշխանութեամբ այլազգեաց, և հաւատարիմ ծառայք Քոյին, անձամբ չափ պաշտպան կացեալ Քումդ պատկերի, ծովաշու գնացին ընդ Սեաւ ծով, 'ի խորտակել այլոց նաւուց, նաւն՝ որ բարձեալ տանէր զՔոյդ կենդանագիր, ժամանեաց յանքոյթ նաւահանգիստ »։

Ե. Լիթանիա։ — « Սրբուհի Մարիամ, հաստատութեանս այսմիկ (Կամենիցի) հաւատարիմ պահապան. Սրբուհի Մարիամ, բազմապատիկ պաշտպան կողմանցս (Փոտոլիոյ) հարստահարելոց յայլադեմից. Սրբուհի Մարիամ, որ յայտնապէս երևեցար այլազգեաց 'ի վերայ որման գաւթի եկեղեցւոյս Հայոց. Սրբուհի Մարիամ, որ գնացեր տարագիր 'ի ձեռն հաւատարիմ Քոց ծառայից և ընդ ծով հատեր զուղի. Սրբուհի Մարիամ, որ հրաշիւք զերծուցեր զծառայս Քո 'ի ծովակուր լինելոյ, և հաներ զնոսա 'ի մրրկաց 'ի խաղաղ նաւահանգիստ։

Սրբուհի Մարիամ, 'ի Մակեդոնիա հռչակեալ սքանչելեաք։

Սրբուհի Մարիամ, որ յօտարութենէ հասեր յԻլվով։

Սրբուհի Մարիամ, որ յելանելն թշնամեաց 'ի Կամենիցէ, վաղվաղակի դարձ արարեր 'ի սիրեցեալ Քո տեղին։

Սրբուհի Մարիամ, որ մեծահանդէս պատուով և պաշտամամբ հանգեար 'ի սրբավայր Քոյին. Սբր-